

# ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՐՉԱԿ ԴՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

## Ա. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Երբ մեր հողավածներից մեկում գիտելիքի, գիտական գիտելիքի ճշմարտությունը սահմանեցինք որպես գիտելիքների այնպիսի համապատասխանություն իրականությանը, որը ճշմարիտ է ճանաչվում տվյալ «լսարանում», այսինքն՝ քավարաբ հիմնավորված է, համընդհանրական է և անհրաժեշտ, համոզիչ<sup>1</sup>, առաջացան մի շարք հարցեր, բացատրության որոշ անհրաժեշտություն: Արդյո՞ք այդ սահմանումը տարածվում է առօրեական գիտելիքի վրա: Գնահատության այդ սահմանման տեսակետից ինչպե՞ս կարելի է մեկնարանել ռուսալեզու գրականության մեջ լայն տարածում գտած հարաբերական, բացարձակ, օրյեկտիվ ճշմարտության ըմբռնումները:

Առօրեական գիտելիքի քննորոշ առանձնահատկությունը, նրա տարբերությունը էմպիրիկ և տեսական գիտելիքից այն է, որ իրականության հետ այդ գիտելիքի հարաբերությունը ակնհայտորեն ստուգելի է: Այն երևույթների և նրանց միջև համահարաբերակցության հաստատում է: Եթե մեկն ասում է, որ «այժմ անձրև կամ ձյուն է գալիս», ապա այդ դատողության բովանդակությունը ստուգելի է սեփական պատկերացումը իրականության հետ համադրելու միջոցով. կարելի է դուրս գալ փողոց և դիտել, ստուգել ասվածը: Դա դեռ քավական չէ: Որպեսզի վեր կանգնենք որևէ մեկի սուբյեկտիվ հակումից կամ հայտնիցանցից, արտահայտված դատողության բովանդակությունը պետք է առանց կողմնակարության և շահագրգռվածության ստուգվի և հաստատվի տվյալ պայմաններում գտնվող այլ սուբյեկտի կամ սուբյեկտների կողմից: Ինչպես նկատելի է, ստուգման գործընթացում առկա է երկու տարր՝ դատողության բովանդակության և նրա հիմքի համադրում՝ հիմնավորման տարրական ակտ և այլ սուբյեկտների կողմից դրա անշահախնդիր ճանաչում, «լսարանի» կողմից այդ փաստի համընդհանրականության և անհրաժեշտության, արտասուբյեկտիվ, օրյեկտիվ լինելու ընդունում: Առօրեական գիտելիքի դեպքում դատողության համընդհան-

<sup>1</sup> Նկատենք, որ այդ սահմանմանը մոտ արդյունք առավել վաղ ստացել էր Հ. Ա. Գևորգյանը (տե՛ս Գ. Ա. Գևորգյան, *Вероятное и достоверное знание*, Ереван, 1965, էջ 134-135), որը, ցավոք, վրիպել էր մեր աչքից: Սակայն, այդ սահմանումների միջև կան որոշ տարբերություններ: Հ. Ա. Գևորգյանի հետազոտությունների կենտրոնում եղել է գիտելիքի հավանականության և հավաստության պարզելը: Հավաստի գիտելիքը նա սահմանել է այսպես՝ գիտելիքը հավաստի է, երբ (ա) առկա են լրիվ հիմքերը պնդելու համար, որ նրա ճշմարտությունը վերջնականորեն հաստատված է, այնպես որ այն կարիք չունի հետագա հիմնավորման (ապացուցման), ուստի (բ) նրա ճշմարտության նկատմամբ կա լրիվ սուբյեկտիվ վստահություն, հանգվածություն: Մինչդեռ գիտելիքը հավանական է, երբ առկա են ոչ թե լրիվ, այլ որոշ հիմքեր պնդելու համար, որ այդ ճշմարտությունը հաստատված է, ուստի և նրա նկատմամբ կա որոշակի վստահություն, բայց մենք պատրաստ ենք նաև, որ այդ վստահությունը կարող է չարդարանալ...

Հաջորդ տարբերությունն այն է, որ Հ. Ա. Գևորգյանը երբեմն հավանական գիտելիքի մեջ մտցնում է նաև որոշ կարգի գիտական տեսություններ (տե՛ս էջ 133-134), իսկ մենք գտնում ենք, որ եթե գիտական տեսությունը տվյալ ժամանակի սոցիալ-մշակութային համատեքստում համարվում է այդպիսին՝ ճանաչված է, ապա այն հավաստի է, ճշմարիտ: Մի առանձնահատկություն ևս, մենք սուբյեկտիվ ասելով հասկանում ենք այն առնձր, ինչը վերաբերում է անհատական գիտակցությանը, ուստի ճշմարտության մեր սահմանման մեջ համոզականությունը վերաբերում է «լսարանին», հասարակական տվյալ խմբին, այսինքն՝ այն ըստ էության ունի համընդհանրական, օրյեկտիվ բնույթ: Ըստ մեզ, ի տարբերություն հիմնավորման «տեսանելի» ռաջիոնալ տարբեր ձևերի, համոզականությունում դրան որովում են հասարակական ոգու այն բոլոր կողմերը, որոնք հնարավոր չէ ներկայացնել «առարկայական», ռաջիոնալ, տրամաբանական տեսքով: Եթե ասում ենք, որ տվյալ գիտելիքի ձևը հայտնի «լսարանում» ճանաչվում է տեսություն, ճշմարիտ, ապա նշանակում է, որ դրա համար առկա են բոլոր հիմքերը՝ և ռաջիոնալ, և իռացիոնալ, այսինքն՝ այն ունի քավարաբ հիմնավորվածություն, համընդհանրականություն և անհրաժեշտություն, հանգվականություն:

բական և անհրաժեշտ ճանաչման հիմքը փաստի համապատասխանությունն է օբյեկտիվ աշխարհի տվյալ երևույթի արձանագրման հետ: Սակայն, դա չի նշանակում, թե այն ամենը, ինչը մարդկանց մոտ, «լսարանում» համընդհանրական ու անհրաժեշտ է, միայն օբյեկտիվ բնության ազդեցության կամ, ինչպես ընդունված է ասել, բնության արտացոլման արդյունք է: Չէ՞ որ մարդկանց գործունեության, միայնաց հետ նրանց ունեցած հարաբերությունների արդյունքում առաջանում են համընդհանրական ու անհրաժեշտ գիտելիքներ, ինչպես օբյեկտներ, նշաններ, նշանակություններ, դրանց համակարգեր և այլն, որոնք ուղղակիորեն բնության հետ անմիջական առնչություն չունեն: Ավելին, մարդկային ողջ գործունեությունը, նրա արդյունքները՝ գիտելիքները, ներծծված են հասարակական-մշակութային նորմերով, արժեքներով, իդեալներով և այլն: Ուրեմն ճիշտ չէ տվյալ «լսարանում» գիտելիքի համընդհանրական ու անհրաժեշտ լինելը ուղղակիորեն կախվածության մեջ դնել բնությունից, բնության արտացոլում լինելուց, թեև գիտելիքի որոշ բնագավառներում՝ քննադատության մեջ հիմնական հիմքերից մեկը բնությունն է: Հենց վերը բերված գիտելիքների և իրականության համընկման առօրեական պատկերացումներն են ընկած ճշմարտության Հին հունական՝ Արիստոտելի սահմանման հիմքում: Պետք է նկատել, որ ակնհայտության վրա հիմնված գիտելիքի ճշմարտության այդ պահանջը հիմնականում բավարարել է մարդկությանը ընդհուպ գիտության դասական շրջանը, թեև մինչև այժմ էլ ճշմարտության արիստոտելյան սահմանմանը իր նախնական տեսքով հանդիպում ենք շատ դասընթացներում: Հիմնական դժվարությունները առաջացան ոչ դասական գիտության, առանձնապես քննադատության մեջ տեղի ունեցած փոփոխություններից: Փոփոխվեցին ոչ միայն տարածության, ժամանակի, պատճառականության, նյութի կառուցվածքի և այլ ըմբռումները, այլև գիտելիքի, նրա կառուցվածքի, իրականության նկատմամբ հարաբերության, գիտական գիտելիքի պարզության, ակնհայտության և այլ նախկին պատկերացումները: Ժամանակակից գիտական գիտելիքի մեծ չափերի մաթեմատիկացումը, էմպիրիկ հիմքերից նրա խիստ վերացարկվածությունը, բազմաթիվ, նույնիսկ նույն ոլորտը ներկայացնող մրցակից տեսությունների առաջացումը, միջտեսական հարաբերությունների ձևավորումը միանգամայն փոխեցին գիտելիքի, առանձնապես գիտական գիտելիքի մասին եղած նախկին պատկերացումները: Ակնհայտ է, որ գիտելիքը իրականության միագիծ արտացոլում դիտելը առնվազն չի կարող բավարարել ստեղծված, ձևավորված իրողություններին: Գիտելիքը ոչ թե իրականությունից արատացված ընկալումների, պատկերացումների մեխանիկական գումար է, այլ մարդկային ոգու ողջ կարողությունների, այդ թվում հասարակական, մշակութային ձևերի սերտ գործունեության արդյունք, կառուցվածք է: Բնական է, որ պետք է վերանայվեր նաև ճշմարտության արիստոտելյան ըմբռումը: Մեր հողվածներից մեկում՝ մենք արդեն քննարկել ենք փիլիսոփայության պատմությանը հայտնի ճշմարտության հիմնական մոտեցումները, դրանց հետ կապված դժվարությունները և խնդրի մեր կողմից առաջարկված լուծումները: Այդ տեսակետից ճշմարտության արիստոտելյան մոտեցումը, որը երկար ժամանակ այնքան ակնհայտ էր թվում, կարելի է դիտել որպես ճշմարտության մեր սահմանման մասնավոր դեպք, որը բավարարում է առօրեական գիտելիքին, որոշ բացառություններով՝ նաև գիտության դասական շրջանին, սակայն՝ ոչ ժամանակակից գիտական գիտելիքի պատկերացումներին:

Ըննարկվող հաջորդ հարցը ճշմարտության օբյեկտիվության ըմբռումն է: Պ. Վ. Ալեքսեևի և Ա. Վ. Պանինի «Փիլիսոփայություն» դասագրքում օբյեկտիվ ճշմարտությունը սահմանված է այսպես՝ այն ճանաչող սուբյեկտի կողմից օբյեկտի աղէքվատ արտացոլումն է, որը վերարտադրված է այնպես, ինչպես այն գոյություն ունի ինքնին, գիտակցությունից դուրս: Մարդկային պատկերացումների ճշմարիտ բովանդակությունը կախված չէ ոչ մարդուց, ոչ էլ մարդկությունից, այն ապադասակարգային է, վերպատմական: Եվ հակառակը, ճշմարտությունը «սուբյեկտիվ է», նշանակում է, որ այն գոյություն չունի անկախ մարդուց և մարդկությունից՝ Մեր կարծիքով, բերված պնդումները ճշգրտման կարիք ունեն: Չի կարելի հավասարության նշան դնել մարդու և մարդկության միջև: Բացի այդ «մարդկություն»

<sup>2</sup> Տե՛ս Ս. Ս. Ղազարյան, Գիտական ճշմարտության մի ըմբռնման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, N 2, էջ 66-76:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Վ. Алексеев, А. В. Панин. Философия. М., 1996, էջ 120-121:

հասկացությունը չափազանց տարողունակ է: Այն կազմված է տարբեր շերտերից, տարածվում է պատմական ամբողջ ժամանակաշրջանի վրա, որը ևս միատարր չէ: Այդ առումով ի՞նչ ենք հասկանում, երբ ասում ենք, թե ինչ-որ բան օրյեկտիվ է կամ սուրյեկտիվ է: Դա նշանակում է, որ այդ ինչ-որ բանը անկախ է ավյալ մաքրադ, անհատի սուրյեկտիվ կամքից և բանականությունից կամ անկախ չէ: Թվում է, թե գիտելիքի ճշմարտության օրյեկտիվության հատկանիշի միակ, բացառիկ լուծումը ավյալ օրյեկտի գոյության հիմքերը ճանաչող սուրյեկտից դուրս տեսնելն է: Նրան այնպիսի խիստ հատկանիշների վերագրումը, ինչպիսիք են աղերքվատությունը և նրա վերաբառադրությունը ինքնին՝ այնպես, ինչպես այն գոյություն ունի: Սակայն հայտնի է, որ օրյեկտիվ իրականությունը մեզ տրված է գիտելիքների, գիտական գիտելիքների տեսքով, որի իրականության հետ աղերքվատ, միանշանակ համապատասխանության հարցի լուծումը դժվար, եթե ոչ անհնարին է: Բանն այն է, որ գիտելիքները մարդկային ստեղծագործության արդյունք են, որ մարդը պարզագույն արտացոլող սարք չէ, իսկ գիտելիքը պարզագույն արտացոլման արդյունք չէ: Եթե գիտելիքի օրյեկտիվ բնույթը կախված լիներ միայն նրա աղերքվատ արտացոլումից, ապա այն չպետք է փոփոխվեր իր պատմական գործընթացում, այսինքն՝ այն պետք է մնա այնպիսին, ինչպիսին եղել է: Իսկ մարդկային գիտելիքների մեջ կա՞ այնպիսի ոլորտ, որը փոփոխվի: Նույնիսկ գիտելիքի այնպիսի կայուն ձև եր, ինչպիսիք են գիտական փաստերը, պատմական գործընթացում կարող են տարբեր մեկնաբանություններ ունենալ: Իր ժամանակ այդպիսի բնագավառ համարվում էր նյութական ֆիզիկան, սակայն այն էլ ժամանակի ընթացքում փոփոխվեց: Մեր աչքի առաջ փոփոխվում են ռազմաթիվ կարծր համարում ունեցած պատկերացումներ և գիտական տեսություններ: Այդ իմաստով ճշմարիտ գիտելիքին աղերքվատություն, այնպես, ինչպես գոյություն ունի, ինքնին վերաբառադրության հատկանիշների վերագրումը կարելի է հասկանալ միայն որպես ռեզյուլտիվ գաղափար, իդեալ, որին անընդհատ ձգտում են:

Իրականում վերը նշված հարցին պետք է մոտենալ՝ ելնելով առկա իրողություններից: Գիտական հետազոտությունների ընթացքում մենք հիմնականում ունենք երկու գործընթաց՝ պորբլեմներից հիպոթեզների միջոցով անցում տեսությունների և գիտության պատմության ընթացքում տեսությունների հերքափոխում: Ըստ մտածողների, այդ թվում նաև Կ. Պոպերը, ըստ էության տարբերություն չեն դնում հասուն հիպոթեզների և տեսության միջև: Իսկ դրանց միջև տարբերությունը էական է՝ գիտական տեսության համար ավյալ ժամանակաշրջանում, «լսարանում» համընդհանուր ճանաչման, ընդունման գործընթացը ավարտված է, այսինքն՝ դրա համար առկա են լրիվ հիմքերը՝ ինչպես օրյեկտիվ, այդպես էլ սուրյեկտիվ, ինչպես ռացիոնալ, այդպես էլ իռացիոնալ, իսկ հիպոթեզի համար՝ ոչ: Ի տարբերություն հիպոթեզի, գիտական տեսությունը ճանաչված է, համընդհանրական և անհրաժեշտ է ավյալ ժամանակաշրջանում, «լսարանում», այսինքն՝ ունի բավարար հիմնավորվածություն, այդ թվում նաև էմպիրիկ և համոզեցուցիչ է: Ի՞նչ դեր ունի այստեղ համոզականությունը: Թվում է, որ բավարար հիմնավորվածությունը ինքնըստինքյան հանգեցնում է համոզականության: Սակայն, մեր կարծիքով, համոզականությունը ավելին է, քան հիմնավորվածությունը: Այն առանձնահատուկ ինտուիտիվ, իռացիոնալ զգացողություն է, հոգեվիճակ, որը մեր մտաբանականությանը է առաջացնում իդեալական ամբողջականությանը ձգտումով, գիտելիքի ավարտվածությամբ: Համոզականությունը անհատական, խմբակային, հասարակական հոգեվիճակ է, որում արտահայտված են այն հույսերը, որ իրադրությունը կարող է զարգանալ, ծավալվել սեփական ենթադրությունների, աղենիշների համապատասխան: Համոզումըների համար հիմք է հանդիսանում մարդկության հոգևոր փորձը: Այն ապրվում է մարդու և մարդկության կենսափորձով: Մեր կարծիքով ինչքան էլ ռացիոնալ լինի ճանաչողությունը, այդուամենայնիվ տեղ է մնում համոզումըներից: Այն մարդու, մարդկության հնարավորությունների, ազատության, ընտրության դրսևորում է, փնտրումների մղող լսրված հոգեվիճակ է, որը երևակայության, ազատ խաղի միջոցով անընդհատ ընդլայնում է իր սահմանները: Երբ հիպոթեզի բավարար հիմնավորվածությունը մեր մեջ առաջացնում է այնպիսի զգացողություն, որը տիրապետող է դառնում ավյալ «լսարանում», ճշմարտանման հիպոթեզները գնահատվում է որպես տեսություն, օրյեկտիվ ճշմարիտ: Այսպիսով, համոզականությունը ոչ միայն բարձրանում է հիմնավորվածության վրա, այլև լրացնում, իդեալական ամբողջականության է բերում այն: Այսինքն՝ մենք ունենք գիտելիք-

ների օրյեկտիվ ճշմարիտ գնահատման՝ օրյեկտիվ և սուրյեկտիվ, ուսցիոնալ և ինացիոնալ կողմերի միասնություն, ամբողջականություն, հարմոնիա: Ի դեպ՝ պատմականորեն մարդկային քանակականության այդ կողմերը շարժում են: Ինչպես ցույց է տալիս գիտության պատմության ընթացքը գիտելիքի հիմնավորման ուսցիոնալ, «տեսանելի» ձևերը աճում, դառնում են ավելի ու ավելի բազմազան, սակայն դրանք երբեք չեն սպառի մեր քանակականության ինացիոնալ կողմը, ինտուիտիվ զգացողությունը, համազականությունը: Այսպիսով, գիտական գիտելիքը մենք գնահատում ենք օրյեկտիվ, ճշմարիտ, կոնկրետ տվյալ ժամանակաշրջանում, եթե այն համապատասխանում է իրականությանը, այսինքն՝ ճանաչված է, համընդհանրական ու անհրաժեշտ է գիտնականների «լսարանում», ունի քավարաբ հիմնավորվածություն և համազականություն:

Ի՞նչ ենք հասկանում գիտնականների «լսարան» կամ ընդհանրապես «լսարան» ստեղծելով: Ինչո՞ւ գիտելիքի ճշմարտության սահմանման մեջ շեշտվում է «լսարան» ըմբռնումը: Բանն այն է, որ ինչպես առանձին մարդիկ, այդպես էլ մարդկային հասարակությունը համասեռ, միատարր չէ: Այն կազմված է հասարակական տարբեր շերտերից, խմբերից, կուսակցություններից, դասակարգերից և այլն, որոնց բնորոշ է ինչ-որ ընդհանրություն: Այն կարելի է սահմանել այսպես՝ «լսարանը» անհատների կամ անհատների խմբերի հարաբերական կայուն հարաբերությունների համակարգ է: Նրա կազմավորման տարրերն են՝ պահանջմունքները, շահերը, հետաքրքրությունները, ուսուցումը, դաստիարակությունը, լեզուն, գիտելիքները, նրանց ձեռքբերման և հիմնավորման եղանակները, արժեքները, արժեքային կողմնորոշումները, գնահատման չափանիշները, նորմերը, էտալոնները, մոտիվները, ստանդարտները, սկզբունքները, իմաստները, նշանները, պատկերները, ավանդույթները, սովորությունները, ձգտումները, ցանկալի, մտապահ, հեռակա, հեռանկարային նպատակները, իդեալները, մտածողության ռճը, հույսերը, հավատամքը, ապրումները, էմոցիաները, զգայությունները, զգացողությունը, հոգեկան տրամադրվածությունը, տարածությունը, ժամանակը և այլն, որոնք կարգավորում, ապահովում են տվյալ մարդկային համախմբի, «լսարանի» ամբողջությունը, միասնությունը, միաբանությունը: Անտարակույս մարդկային, սոցիալ-մշակութային՝ վերը բերված բոլոր տարրերի համընկնումը չէ, որ «լսարան» է ստեղծում: Բավական է համընկնի դրանց որոշ մասը, որպեսզի մարդկային միաբանություն, «լսարան» ստեղծվի: Ընդ որում, միևնույն անհատները կարող են տարբեր «լսարանի» անդամներ լինել: Դա նշանակում է, որ մենք կարող ենք ունենալ տվյալ հասարակական օրգանիզմի կայունությունը, կանոնավորությունը, միասնությունը ապահովող տարբեր տարրերի ամբողջականություններ, այսինքն՝ տարբեր «լսարաններ»։ սկսած ամենափոքրիկ՝ երկու հոգանոց «լսարանից», վերջացրած իր զարգացումը սպորտ մարդկային ամբողջ պատմությամբ, որը կարելի է դիտել որպես անընդհատ փոփոխվող, սակայն ինչ-որ սոցիալ-մշակութային ընդհանրություն, ամբողջականություն ունեցող «փակ» և «բաց» համակարգերի, «լսարանների» միասնությունը:

Նկատենք, որ բեկ գիտելիքը, գիտական գիտելիքը ունեն տարբեր շերտեր, իր զարգացման ներքին օրինաչափությունները, այդուամենայնիվ, մենք գտնում ենք, որ հարկավոր է շեշտել գիտելիքի և այն ստեղծող, հիմնավորող, գնահատող, հասկացող, ընկալող, զգացող «լսարանի» միասնությունը:

Հաջորդ հարցն այն է, թե ինչպե՞ս կարելի է մեկնաբանել զրականության մեջ ընդունված քացարձակ ճշմարտության գաղափարը: Ե. Մ. Չուդինովը՝ քացարձակ ճշմարտության գաղափարը կապում է գիտելիքի ժառանգականության, աճի հետ, որոնք ավելի խորը և լրիվ են արտապատկերում օրյեկտիվ աշխարհի էությունը: Պ. Վ. Ալեքսեևի և Ա. Վ. Պանինի դասընթացում՝ այն սահմանված է այսպես. «դա լրիվ, սպառիչ գիտելիք է առարկայի մասին»: Ի՞նչ է նշանակում ավելի խորը, լրիվ, սպառիչ հատկանիշներ վերագրել գիտելիքին: Այն ենթադրում է գործընթաց: Եթե վերցնենք գիտելիքի այնպիսի ձևեր, ինչպիսիք են հիպոթեզը և տեսությունը, ապա բնական է, որ հիպոթեզի նկատմամբ տեսությունը և՛ ավելի խորն է, և՛ լրիվ է, և՛ սպառիչ է: Ուստի գիտական տեսությունը, որը ճանաչված է լրիվ հիմքերով, այսինքն՝ քավարաբ հիմնավորված, համընդհանրական և անհրաժեշտ, համազգեսուցիչ, սպա-

<sup>4</sup> Տե՛ս Զ. Մ. Чудинов, Природа научной истины, М., 1977, էջ 282:

<sup>5</sup> Տե՛ս П. В. Алексеев, А. В. Панин, նշվ. աշխ., էջ 131:

ռիչ, ավարտում, համապարփակ է տվյալ բնագավառում, այդ «լսարանի» տարածաժամանակային, սոցիալ-մշակութային համատեքստում կարելի է դիտել բացարձակ ճշմարտություն: Հարց է առաջանում, հնարավո՞ր է արդյոք իրականության որևէ բնագավառի համար բացարձակ լրիվությամբ, խորությամբ, ապագա ցանկացած հասարակության, «լսարանի» կողմից ճանաչված տեսություն կառուցել կամ ունենալ իրականությունը համապարփակորեն ներկայացնող ցանկացած հասարակությունից վեր կանգնած բացարձակ ճշմարտություն: Ինչպես ցույց է տալիս գիտական ճանաչողության պրակտիկան, յուրաքանչյուր տեսություն որակապես սպառիչ է, լրիվ է ու ավարտում, էական ասպեկտներով, օբյեկտներով, սկզբունքներով վերջավոր է, այսինքն՝ հարաբերականորեն «փակ» համակարգ է: Բնականորեն, եթե դենք բոլոր բնագավառների համար բացարձակ, համաընդգրկուն տեսություն կառուցելու հնարավորության հարցը, ապա կհանգենք բնության սահմանափակության, վերջավոր ճանաչողության գաղափարին: Մենք այն տեսակետն ենք պաշտպանում, որ նյութական աշխարհը անսահմանափակ է ոչ միայն իր ամբողջականության, այլև հատվածների մեջ: Այսինքն՝ աշխարհն ավելի հարուստ է, քան ցանկացած տեսական կառուցվածք: Ելնելով ասվածից, կարելի է եզրակացնել, որ բացարձակ, համաընդգրկուն, լրիվ, սպառիչ տեսության կառուցումը, նույնիսկ մի որևէ բնագավառի համար, միայն պատրանք է: Այդ իմաստով բացարձակ ճշմարտությունը գիտական հետազոտության գործընթացի տեսակետից ցանկալի նպատակ, ռեզուլյատիվ գաղափար է, որը կարգավորում, ուղղում է առանձին տեսությունների հաջորդափոխությունը: Պատահական չէ, որ գիտության աճը, զարգացումը որոշ գիտնականների կողմից դիտվում է միմյանց հետ կապված և փոփոխվող տեսությունների տեսքով՝: Այդ առումով գործընթացի, բաց «լսարանի» տարածաժամանակային, սոցիալ-մշակութային համատեքստի տեսակետից, որտեղ այդ տեսությունը չունի այնպիսի լրիվ, համընդգրկուն տեսք, ինչպիսին այն ուներ նախկինում՝ «փակ լսարանում», այդ նույն տեսությունը դիտվում է հարաբերական ճշմարիտ: Ծանաչողական գործընթացի մեջ ոչ միայն նախկին գիտելիքն է դառնում այդ նույն բնագավառի առավել զարգացած գիտելիքի ձևի մասնավոր դեպք, այլև այն՝ այդպիսին ճանաչած «լսարանը»: Այդպիսով, մի կողմից մենք ունենք անընդհատ փոփոխվող ու զարգացող, իրականությունը առավել հարուստ ու խորը ճանաչող, բացարձակ լրիվության ու անփոփոխության, ցանկալի նպատակի, բացարձակ ճշմարտության ձգտող գիտական գիտելիք, այն ճշմարիտ ճանաչող, ծավալվող «բաց լսարան», հարաբերական ճշմարտությունների շղթա, մյուս կողմից՝ «փակ լսարանի» տարածաժամանակային, սոցիալ-մշակութային համատեքստում լրիվ հիմքերով ճանաչված, անփոփոխ ամբողջական տեսություններ, բացարձակ ճշմարտություններ: Այդ տեսակետից ամեն մի հարաբերական ճշմարտություն իրացված նպատակի, բացարձակ ճշմարտության պահ, ակնբարք է: Եթե ելնել հեզելյան, մարքսիստական փիլիսոփայության ավանդույններից, ապա պետք է ասենք, որ գիտական տեսությունը որպես ճշմարտություն և՛ հարաբերական է և՛ բացարձակ՝ կախված այն քանից, թե ինչ «լսարանի» տեսակետից ենք այն դիտարկում: Նկատենք, որ «լսարանի» փակությունը հարաբերական է. այն կամ ավելի «մեծ լսարանի» մաս է կամ ծավալվող, «զարգացող» «բաց լսարանի» մասնավոր դեպք է: Ուստի «փակ լսարանում» ճանաչված գիտելիքը և այդ գիտելիքի ճշմարտային գնահատականները պետք է համադրվեն, ճշգրտվեն համապատասխան՝ ավելի «մեծ լսարանում» կամ «բաց լսարանում» ճանաչված գիտելիքի, նրա ճշմարտային գնահատականների հետ, և միայն այդ դեպքում է բյուրեղանում «փակ լսարանի» գիտելիքը, նրա ճշմարտային գնահատականները: Ավելին, «լսարանները» պատմականորեն կարող են այնքան հեռանալ միմյանցից, որ դրանց գիտելիքի ճշմարտային գնահատականները դժվար կամ գրեթե անհնար է համադրել միմյանց: Օրինակ, ժամանակակից աչքերով քավական դժվար է գնահատել անտիկ և միջնադարյան շրջանի գիտելիքի ճշմարտային գնահատականները: Դրա համար անհրաժեշտ է վերականգնել ավյալ «լսարանի» գիտելիքի ճշմարիտ ճանաչման բոլոր հիմքերը, այսինքն՝ հիմնավորման, համընդհանրականության և անհրաժեշտության, համոզականության ամբողջ պատկերը, որը գործնականում անհնար է: Այդ պատճառով պատմական գիտելիքի առջև միշտ կանգնած է ժամանակակից պատկերացումների տեսակետից

\* Տե՛ս *Нильс Бор, Избранные научные труды*, т. 2, М., 1971, էջ 399-433: *Karl R. Popper, Conjectures and refutations*. London, 1969, էջ 215-250:

անցյալը «վերակառուցելու» վտանգը, որքանով ամեն մի «լաբանի» բնորոշ է իր ինքնությունն ու ինքնությունությունը, պատկերացումների, կատեգորիաների, հիմնավորման միջոցների, զգացողության և այլնի ամբողջականությունը, գիտելիքի ճշմարիտ գնահատման իր յուրահատկությունը: Սակայն դա չի նշանակում, որ այդ «լաբանները» այնքան տարբեր են միմյանցից, որ անհնար է «ներքաշիանցել» մի «լաբանից» մյուսը, մի «լաբանում» ճանաչված գիտելիքները համեմատել մյուս «լաբանում» ճանաչված գիտելիքների հետ: Պետք է նկատի ունենալ, որ որքան էլ տարբեր են այդ «լաբանները», այդուամենայնիվ դրանք մտքովային «լաբաններ» են: Այսինքն՝ չի կարելի ոչ քացարձակացնել «լաբանների» ինքնությունը, ոչ էլ դրանց ընդհանրությունը: Ամեն մի «լաբան» անհրաժեշտ է ուսումնասիրել, դիտարկել իր ներքին ամբողջականության, յուրահատկության տեսակետից:

**А. С. КАЗАРЯН- Абсолютная и относительная истина.-** В статье рассматриваются взаимоотношения между абсолютной и относительной истинами с позиции развития научной теории. В связи с этим по-новому определяются понятия “аудитория” и “убеждения”.